ՍԿՍՎԵԼ Է ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀՀ ԱՆ ակադ. Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ հնարավոր դարձավ ձեռք բերել թվայնացման սարք և Հանրապետական գիտաբժշկական գրադարանում սկսել գրադարանային հավաքածուի թվայնացման գործընթացը:

ՀԳԲԳ-ում թվայնացումը սկսված է:

ՀՀ Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ, Առողջապահության ազգային ինստիտուտը, Հայկական բժշկական միջազգային կոմիտեն և Հայկական հոգեբուժական ասոցիացիան ապրիլի 22-ին Zoom հարթակում կազմակերպել էին հոգեբույժ, Տրամադրության հետազոտման միջազգային ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր **Հակոբ Ակիսկալի** մեծարման երեկոն:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանը**: Երեկոյի հատուկ հյուրն էր **Քնարիկ Ակիսկալը**: Ելույթ ունեցան նաև Համաշխարհային հոգեբուժական ասոցիացիայի նախագահ **Աֆկալ Ջավեդը**, Հայկական բժշկական միջազգային կոմիտեի նախագահ **Վիգեն Սեփիլյանը**, Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ **Արմեն Սողոյանը** և այլք:



ԿԱԹՎԱԾԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ

«Էրեբունի» ԲԿ-ի Կաթվածի կենտրոնը՝ ԱԱԻ-ի Նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնի հետ համատեղ, կազմակերպում է **«Կաթվածի գարնանային դպրոց»** միջոցառումը՝ նվիրված կաթվածի վարման նորագույն մոտեցումներին:

Միջոցառումը տեղի կունենա մայիսի 21-ից 23-ը Դիլիջանում: Դասախոսություններն իրականացնելու են ՀՀ-ում, Եվրոպայում, Կանադայում և ԱՄՆ-ում կաթվածի խնդիրներով զբաղվող առաջատար մասնագետները:

Մասնակցությունն անվճար է սահմանափակ քանակով մասնակիցների համար: Հնարավոր է նաև անվճար մասնակցություն այն մասնագետների համար, ովքեր կկարողանան հոգալ իրենց կեցության և սննդի հարցը: Միջոցառման ավարտին, մասնակցության համար տրվելու են վկայագրեր՝ շարունակական մասնագիտական զարգացման տեսական (ՇՄԶ) կրեդիտներով:

Մասնակցության հայտեր կարող են ներկայացնել կաթվածի բուժմամբ զբաղվող նյարդաբաններ, նեյրովիրաբույժներ, նեյրոռեանիմատոլոգներ (առաջնակի նախապատվությունը տրվելու է նրանց):

Հարկավոր է ուղարկել հակիրճ CV՝ մասնագիտության նշումով: Հայտերն ընդունվում են մինչև մայիսի 1-ը, հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ dr.marinebalasanyan@gmail.com:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԻ ՀԵՏԵՎԵԼ ՆԱԵՎ ԱՌՑԱՆՑ ՌԵԺԻՄՈՎ, ZOOM ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ:

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19-ԻՑ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ՍԵՌԻ ԵՎ ՏԱՐԻՔԻ

Հաշվի առնելով հանրային հետաքրքրությունը՝ Առողջապահության նախարարությունը հրապարակում է COVID-19-ից մահացության գրանցված ցուցանիշները՝ ըստ սեռի և տարիքի:

2020 թվականի ապրիլից մինչև **2021 թվականի ապրիլի 20-ն** արձանագրվել է կորոնավիրուսային հիվանդությունից **մահվան 3919 դեպք:** Ընդ որում, 2020 թվականի ապրիլից մինչև դեկտեմբեր գրանցվել է **3045** մահվան դեպք, իսկ 2021 թվականի հունվարից մինչև ապրիլի 20-ը՝ **874**:

COVID-19-ից մահերի **57%-ը** գրանցվել է **արական** սեռի ներկայացուցիչների մոտ, իսկ **43%-ը՝ իգական**:

Մինչև 18 տարեկանների շրջանում արձանագրվել է մահվան **մեկ** դեպք, **63 տարեկանից բարձր** անձանց շրջանում՝ **3034** դեպք **(76%)**:



ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի Ուռուցքաբանության ամբիոնը հրավիրում է մասնակցելու ուռուցքաբանության ժամանակակից խնդիրների վերաբերյալ դասախոսությունների շարքին:

Դասախոսություններն անցկացվում են առցանց եղանակով, **Zoom** հարթակում:

Դասախոսությունները նախատեսված են ինչպես ուռուցքաբանների, այնպես էլ ընտանեկան բժիշկների, ընդհանուր վիրաբույժների, գինեկոլոգների, ուրոլոգների, թերապևտների համար:

Մասնակցության համար տրվում են շարունակական մասնագիտական կարգացման տեսական (ՇՄԶ) կրեդիտներ:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՆ ԵՆ

- **Ստամոքսի քաղցկեղի բուժման նորագույն մոտեցումները** *(Արտակ Գաբրիելյան, ապրիլի 19, 2021թ. 19:00-20:00)*
- **Ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի բուժման նորագույն մոտեցումները** *(Համլետ Պետրոսյան, ապրիլի 26, 2021թ. 19:00-20:00)*
- **Կրծքագեղձի քաղցկեղ, ռեկոնստրուկտիվ վիրահատություններ** *(Ներսես Բերբերյան, մայիսի 3, 2021թ. 19:00-20:00)*
- **Ճառագայթային թերապիայի ժամանակակից մոտեցումները** *(Սևանա Աբնուսի, մայիսի 10, 2021թ. 19:00-20:00)*
- **Թոքի քաղցկեղ, մուտացիաների որոշում և թիրախային թերապիա** *(Տաթևիկ Շաբոյան, մայիսի 17, 2021թ. 19:00-20:00)*
- **Ժամանակակից իմունաթերապիա** *(Հայկուհի Գյոկչյան, մայիսի 24, 2021թ. 19:00-20:00)*

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

213288
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

963225
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

194080
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

4018
ՄԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Ապրիլի 25-ի դրությամբ

3158 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

410 ՆՈՐ ԴԵՊՔ

720 ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

14189 ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏ

17 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**